

Հայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք
1-01, 1-12

Ավտոպատահարներ

Հունիսի 19-ին, ժամը 17.39-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Ա. Խաչատրյան եւ Վ. Փափազյան փողոցների խաչմերուկում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, առկա է վառելիքի արտահոսք եւ հնարավոր է հրդեհի բռնկում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ իրար են բախվել Մ. Իսահակյանին պատկանող «Մերսեդես 500» մակնիշի եւ Ա. Գաբրիելյանին պատկանող «Օպել» մակնիշի ավտոմեքենաները: Հրշեջփրկարարները հովացրել են ավտոմեքենաների շարժիչները եւ հեռացրել ճանապարհին թափված վառելիքը:

Վթարի հետեւանքով 1978 թ. ծնված Մ. Իսահակյանը թեթեւ մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն, որտեղ ստանալով առաջին բուժօգնություն, դուրս գրվել:

Հունիսի 20-ին Սպիտակի Տաշիրի փողոցի խաչմերուկում «ԿՎԶ» մակնիշի 36 ՕՏ 605 պետհամարանիշով ավտոբուսը բախվել է «ՎԱԶ-2106» մակնիշի 11 ՕԼ 482 պետհամարանիշով ավտոմեքենային:

Վթարի հետեւանքով Լոռու մարզի Միխայիլովա գյուղի բնակիչներ՝ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, 1985 թ. ծնված Արայիկ Դալլաքյանը եւ ուղեւոր, 1984 թ. ծնված Արթուր Սեյանը զոհվել են, իսկ մյուս ուղեւոր, 1962 թ. ծնված Սվետլանա Մարգարյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Սպիտակի «Նորվեգական» հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը միջին ծանրության է:

Հունիսի 21-ին, ժամը 01.55-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Չելսոփի փողոցի 42 շենքին հարակից տարածքում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Պարզվել է, որ իրար են բախվել «ՎԱԶ-2121» մակնիշի 13 ՕՕ 032 պետհամարանիշով ավտոմեքենան եւ «ՄԱԶ» մակնիշի Դի-ԷՓի 470 պետհամարանիշով բեռնատարը:

Փրկարարները «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել վարորդ, 1985 թ. ծնված Ալեքսանդր Մկրտչյանին, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Հունիսի 25-ին, ժամը 11.45-ին ահազանգ է ստացվել, որ Աշտարակ-Թալին ավտոճանապարհի 22-րդ կմ-ին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեռեւ չպարզված հանգամանքներում «Մերսեդես C-280» մակնիշի 22 ՍԼ 800 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս գալով ճանապարհից բախվել է ծառին եւ շրջվել:

Պատահարի հետեւանքով մեքենայի վարորդ, 1982 թ. ծնված Ջավեն Դազարյանը, ուղեւորներ՝ 1967 թ. ծնված Գայանե եւ 1965 թ. ծնված Համաթիկ Խամոյանները տեղի է գտնվել են, իսկ ուղեւոր, 1958 թ. ծնված Արմեն Խամոյանը մարմնական վնասվածքներով

տեղափոխվել է Աշտարակի հիվանդանոց:

Դեպքի վայր մեկնած փրկարարները մեքենայից դուրս են բերել զոհվածների դիակները եւ տուժածին:

Կարկուտ

Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ հունիսի 21-ին տարբեր ժամանակահատվածներում տարածաշրջանում տեղացած կարկուտը վնասել է Թթուջուր եւ Զարինջա գյուղերի ցանքատարածքները:

Վնասի չափերը ճշտվում են:

Հորդառատ անձրեւ

Հունիսի 22-ին Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղից տեղեկություն է ստացվել, որ տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով վնասվել են գյուղի տնամերձ հողամասերը, միջգյուղային ավտոճանապարհները եւ կամրջի մի մասը: Գյուղն ամբողջությամբ հոսանքազրկվել է, շրջվել է 3 էլեկտրասյուն, որոնք վնասել են դպրոցի հենապատը:

Չոհեր եւ տուժածներ չկան: Կատարվում են վերականգնողական աշխատանքներ:

Վնասի չափերը ճշտվելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով:

Սողանք եւ փլուզում

Հունիսի 22-ին, ժամը 03.30-ի սահմաններում հողածածկի սողանքի հետեւանքով Գեղարքունիքի մարզի Դարբաս գյուղում հիմնովին փլուզվել է Հ. Բաղայանին պատկանող երկհարկանի բնակելի շենքը՝ 80 քմ մակերեսով: Նախապես՝ երկու օր առաջ կատարվել էր բնակիչների եւ գույքի տարահանում:

Չոհեր եւ տուժածներ չկան:

Հունիսի 23-ին, ժամը 00.30-ի սահմաններում ահազանգ է ստացվել, որ Գյումրիի Օզանյան փողոցի ԴՕՍ-1 հասցեում տեղի է ունեցել ինքնափլուզում:

Պարզվել է, որ ինքնափլուզվել է Օզանյան փողոցի 11 շենքի 24-րդ բնակարանի

փայտյա տանիքի ներքին շերտի հատվածը՝ 5 քմ մակերեսով:

Իրականացվել է բնակիչների եւ գույքի տարահանում: Չոհեր եւ տուժածներ չկան:

Թունավորումներ

Հունիսի 22-ին դեղորայքային թունավորումով Վանաձորի «Նարեկ» մանկական հիվանդանոց է տեղափոխվել Տարոն-2 թաղամասի բնակչուհի, չորս-ամյա Ալինա Բաբելյանը:

Ըստ բժիշկների՝ երեխայի վիճակը միջին ծանրության է, կյանքին վտանգ չի սպառնում:

Նույն օրը ալկոհոլային թունավորումով Եղեգնաձորի 1-03 ծառայության աշխատակիցները քաղաքային հիվանդանոց են տեղափոխել 1988 թ. ծնված Գեորգ Ամբատյանին:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

Հունիսի 23-ին ալկոհոլային թունավորումով Եղեգնաձորի հիվանդանոց, այնուհետեւ Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 1949 թ. ծնված Հակոբ Հարությունյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

Փակ դռան հետեւում

Հունիսի 24-ին, ժամը 00.01-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Թոթովենցի նրբանցքի 3/2 շենքի 32 բնակարանի բնակիչը չի արձագանքում ոչ հեռախոսի, ոչ էլ դռան զանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները հարազատների ներկայությամբ բացել են բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է սրտի կաթված ստացած, 1933 թ. ծնված Ռիմա Սարիբեկյանը:

Տուժածին ցույց է տրվել առաջին բուժօգնություն, որից հետո նրան հանձնել են շտապօգնության

ՄԻՋՈՒԹ ՇԱՐՎԱԹ
 .. Մ Ի Ջ Ո Ւ Թ Շ Ա Ր Վ Ա Թ ..

Հերթական թայֆունը Ասիայում

Հունիսի 21-ին Ֆիլիպինների հարավային շրջանների վրա հարձակված «Ֆենչեն» թայֆունը խլել է առնվազն 230 մարդու կյանք, եւս 700-ը մինչ այսօր համարվում են անհետ կորած: Ըստ Կարմիր խաչի տարածած հաղորդագրության՝ ջրհեղեղների եւ սողանքների զոհերի թիվը դեռ կարող է աճել, քանի որ ոչ բոլոր տուժած շրջաններից են ստացվել տեղեկություններ:



Թայֆունի հաջորդ հարվածը հասցվեց Հոնկոնգին: Յոթ միլիոն բնակչություն ունեցող քաղաքի վրա թափվեցին տեղատարակ անձրեւներ ու փոթորկային քամի: Ամբողջությամբ դադարեցվել է լաստանավային հաղորդակցությունը, փակվել են մանկապարտեզներն ու դպրոցները, հետաձգվել են տասնյակ չվերթներ:

Խորհակված լաստանավում գոհվել է 800 մարդ

Հունիսի 24-ին Ֆիլիպինների փրկարարական ծառայության ջրասուզակներին հաջողվել է մուտք գործել չորս օր առաջ խորտակված լաստանավը: Փոթորկի ժամանակ կործանված լաստանավում կար ավելի քան 800 ուղեւոր: Ցավոք, լաստանավում ողջ մնացած մարդիկ չեն հայտնաբերվել:

Տեղական իշխանությունների հաղորդմամբ՝ լաստանավի ուղեւորներից փրկվել են միայն 43-ը:

Նախնական տվյալներով՝ նավաբեկությունը տեղի է ունեցել «Ֆենչեն» թայֆունից առաջացած անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով:

Հայտնի է, որ Ֆիլիպիններում լաստանավային հաղորդակցությունը տրանսպորտի բավական տարածված միջոց է: Սակայն հաճախ ուղեւորատար նավերը չեն համապատասխանում անվտանգության պահանջներին: Ըստ փորձագետների՝ լաստանավերի կործանման հիմնական պատճառը նավերի գերբեռնվածությունն է:

Կալիֆոռնիայի անհատներն այրվում են

ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի հյուսիսային շրջաններում կայծակների հետեւանքով բռնկվել են հարյուրավոր անտառային հրդեհներ: Արագորեն տարածվելով չոր եղանակի պայմաններում՝ հրդեհներն ար-



դեն սպառնում են բնակելի թաղամասերին: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում է մի քանի հազար հրշեջ: Երեք-չաբթի օրը նրանց են միացել հրշեջներ հարեւան Օրեգոն եւ Նեւադա նահանգներից: Տարերքի դեմ պայքարում ներգրավված են տասնյակ հրշեջ ինքնաթիռներ եւ ուղղաթիռներ: Իրականացվում է բնակչության տարահանում: Կալիֆոռնիայի նահանգապետի կարգադրությամբ նահանգի տարածքում հայտարարվել է արտակարգ դրություն:

Լայնածավալ անտառային հրդեհներ են գրանցվել նաեւ Հունաստանում: Հրշեջներին առաջիմ չի հաջողվում մեկուսացնել կրակը: Ըստ տեղի օդերեւութաբանական ծառայության՝ հրդեհների տարածմանը նպաստում են Հունաստանի ողջ տարածքում հաստատված շոգ եղանակը եւ ուժգին քամին:

Նոր Ջեյլանդիայում ձյուն է սեղացել

Երեքշաբթի օրը Նոր Ջեյլանդիայի տարածքում տեղացած առատ ձյունը, անձրեւները եւ փոթորկային քամին քառս են առաջացրել երկրի ավտոճանապարհների: Իշխանություններն ստիպված էին որոշ շրջաններում դադարեցնել դպրոցների ու մանկապարտեզների աշխա-

տանքը: Ծանապարհները ծածկվել են ձյան եւ առույցի մի քանի սանտիմետրանոց շերտով: Բնակչությանը խորհուրդ է տրվում խուսափել փողոց դուրս գալուց:

Օդերեւութաբանների կանխատեսումներով՝ երկրի տարածքում սպասվում են փոթորկային քամի, տեղատարակ անձրեւներ եւ կարկուտ:

Թռչնագրիդի նոր օջախ Պակիստանում

Պակիստանի հյուսիս-արեւմուտքում՝ թռչնաբուժական ֆերմաներից մեկում հայտնաբերվել է թռչնի գրիպի բռնկման նոր օջախ: Տեղական իշխանությունների կարգադրությամբ՝ ֆերմայի տարածքում ոչնչացվել է մոտ երկու հազար հավ:



Միեւնույն ժամանակ Ինդոնեզիայի առողջապահության նախարարությունը պաշտոնապես հայտարարել է, որ երկրի տարածքում թռչնի գրիպի վիրուսից գոհվել է եւս երկու մարդ: Այսպիսով, Ինդոնեզիայում H5N1-ի զոհերի թիվը հասել է 110-ի:

Ֆահմա Թյունիբաբյան

աշխատակիցների հսկողությամբ:

Ջրի գոհը

Հունիսի 25-ին, ժամը 20.40-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանյան լճում՝ Ջրային սպորտաձեւերի բարձրագույն դպրոցին հարակից տարածքում ջրահեղձ է եղել մի տղամարդ, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած ջրափրկարարները ջրից դուրս են բերել Երեւանի Գ. Նժդեհի փողոցի 8 շենքի 43-րդ բնակարանի բնակիչ, 1968 թ. ծնված Կամո Հովսեփյանի դին:

Հրդեհներ Անցած շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում գրանցվել է հրդեհի 30 դեպք:

Տանիք, գույք եւ անվաղողեր

Հունիսի 19-ին Արագածոտնի մարզի Օշական գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են Մ. Միրիջանյանին պատկանող տան՝ 120 քմ մակերեսով տանիքը, գրքեր եւ չորս անվաղող:

Ավտոտնակ՝ մեքենայով

Հունիսի 20-ին հրդեհ է բռնկվել Երեւանի Արտաշիայան փողոցի 48 շենքի բակում: Ամբողջությամբ այրվել են Լ. Գեւորգյանին պատկանող 24 քմ մակերեսով ավտոտնակը եւ այնտեղ կայանված «Աուդի 80» մակնիշի 68 US 629 պետհամարանիշով ավտոմեքենան:

Տնակ

Հունիսի 25-ին հրդեհ է բռնկվել Գյումրիի Իսահակյան փողոցի թիվ 223/226 տնակում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Այրվել են Ս. Դամբարյանին պատկանող 45 քմ մակերեսով տնակը, ինչպես նաեւ տան գույքն ամբողջությամբ:

Գազալցակայանում

Հունիսի 24-ին հրդեհ է բռնկվել Վանաձոր-Թումանյան ավտոճանապարհի 34-րդ կմ-ին գտնվող «Չաղիձոր» ՍՊԸ-ին պատկանող գազալցակայանում: Այրվել են բարձր ճնշման սարքավորումների շինության եւ գազալցակայանի տանիքի՝ 35 քմ մակերեսով փայտյա կառուցվածքները:

Ավտոմեքենաներ

Հունիսի 24-ին ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղում այրվում է ավտոմեքենա: Ամբողջությամբ այրվել է «ՎԱԶ-2121» մակնիշի 67 OS 199 պետհամարանիշով ավտոմեքենան:

Հրդեհի հետեւանքով վարորդ Վարուժան Վարդանյանն այրվածքներով տեղափոխվել է եղվարդի հիվանդանոց:

Հունիսի 25-ին Երեւանի Չավարյան փողոցի 1 շենքին հարակից տարածքում այրվել է «Նիսան-521» մակնիշի 643 SU 62 պետհամարանիշով ավտոմեքենան:

Տրանսֆորմատոր

Հունիսի 25-ին հրդեհ է բռնկվել Ապարանի Բաղրամյան փողոցի 29 հասցեում՝ բարձր լարման էլեկտրաէներգիայի տարածքում:

Ամբողջությամբ այրվել է թիվ 2 տրանսֆորմատորը (110 կ/վոլտ):

ԼՂ ՓԾ լրատվական կենտրոն

Հրդեհներ

Հունիսի 21-ին տեղեկություն է ստացվել, որ Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղի բնակիչ Բ. Սարգսյանը, խախտելով հակահրդեհային անվտանգության կանոնները, այրել է հնձած արտը, որի հետեւանքով կրակը սպառնացել է տարածվել նաեւ հարակից շինված հացահատիկային արտեր: Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ:

Հրդեհներին հաջողվել է կանխել կրակի տարածումը:

Հունիսի 22-ին Մարտակերտի շրջանի Մադաղիս գյուղի մոտակա չոր խոտածածկույթներում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է մոտ 100 հա տարածք:

Հունիսի 25-ին վերոնշյալ գյուղի հուշարձանի մոտակայքում այրվել է 1 հա չոր խոտ:

Գայլային հարձակումներ եւ... չարի վերջը

Հունիսի 19-ին Հաղորթի շրջանի Հարթաշեն գյուղում գայլը հարձակվել է տան բակում խաղաղուղ 3-ամյա Միեր Արզումանյանի վրա եւ երեխային երախի մեջ առնելով՝ փախել ձորի ուղղությամբ: Երեխայի հայրը նկատելով այդ, հետապնդել է գազանին, որը երեխային թողել է փախել է: Երեխան վնասվածքներով տեղափոխվել է Հաղորթի, այնուհետեւ Ստեփանակերտի մանկական հիվանդանոց:

Նույն օրը երեկոյան ականատեսների պնդմամբ՝ նույն գայլը հարձակման թիրախ է ընտրել Հարթաշենի հարեւանությամբ գտնվող Ակնաղբյուր գյուղը եւ մարմնական վնասվածքներ պատճառել Ա. Հովսեփյանին (ծնվ. 1926 թ.) եւ Ա. Խանյանին (ծնվ. 1946 թ.): Տուժածները տեղափոխվել են Հաղորթի շրջանային հիվանդանոց: Ըստ բժիշկների բոլոր երեք տուժածների առողջական վիճակը բավարար է:

Հունիսի 20-ին ձեռնարկված միջոցառումների շնորհիվ որսորդներին հաջողվել է Հարթաշենի մոտակայքում սպանել գազազած գայլին:

Փլուզում

Հունիսի 23-ին Մարտակերտ-Քարվաճառ մայրուղու 67-րդ կմ-ին տեղի է ունեցել փլուզում, որի հետեւանքով ճանապարհի 100 մետր հատվածը լցվել է ժայռաքեղքերով եւ փակել երթուղիները մասը:

Համապատասխան աշխատանքներ իրականացնելու արդյունքում մի քանի ժամ հետո ճանապարհահատվածը մաքրվել է, երթուղիները վերականգնվել:

Նաիրա Եղիազարյան

Ցավակցական

Խոր վշտով ցավակցություն ենք հայտնում մեր գործընկերոջ՝ **Գրիշա Հարությունի Գրիգորյանի** անժամանակ մահվան առիթով:

Գրիշա Գրիգորյանը ծնվել է 1964 թ. մայիսի 5-ին, Արագածոտնի մարզի Կարբի գյուղում: 2000 թվականից աշխատել է

ԼՂՀ ոստիկանության Քաշաթղի բաժնում, 2006-ից՝ Տիգրանավանի հրշեջփրկարար մասի ջոկի հրամանատարն էր:

Հարգում եւ գնահատում ենք քո վաստակը, սիրելի՛ Գրիշա, թող քո չապրած տարիները լուսավորվեն քո երեք զավակների հաջողություններով:



ՍԵՅՍՄԻԿ ՊՂՇՏՊՂՆՈՒԹՅՈՒՆ


Հունիսի 19-25-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ երկրաշարժ: 4-5 բալ ուժգնությամբ սեյսմիկ ցնցումը տեղի է ունեցել հունիսի 21-ին Հայաստան-Ադրբեջան սահմանային գոտում, Նոյեմբերյան քաղաքից 15 կմ հարավ-արեւելք: Ստորգետնյա ցնցումները զգացվել են Բերդում՝ 4 բալ եւ Իջեւանում՝ 3-4 բալ ուժգնությամբ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է երեք երկրաշարժ: Հունիսի 20-ին Իրանի տարածքում, Խոյ քաղաքից 15 կմ հարավ, տեղի է ունեցել 5 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Հունիսի 22-ին Լեռնային

Ղարաբաղի Մարտակերտ քաղաքից 33 կմ հարավ գրանցվել է 3 բալանոց թույլ սեյսմիկ ցնցում: Հաջորդ օրը Ադրբեջանում, Գյանջա քաղաքից 17 կմ հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է մեկ ուժեղ երկրաշարժ: Հունիսի 22-ին Ռուսաստանի տարածքում, Սախա (Յակուտիա) Հանրապետության հյուսիս-արեւելյան մասում, տեղի է ունեցել 6,1 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Տուժածներ չկան:

ՍՊԱԾ գործակալություն



Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 2899 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 379 մարդ: Եղել է մանկական 189 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 36 երեխա:

Գրանցվել են 39 մահ եւ 19 դժբախտ պատահար:

Հունիսի 19
Թբիլիսյան խճուղու 5 հասցեում բնակվող 1,5 տարեկան Պ. Հայրապետյանը ձախ վերին կրծքավանդակի շրջանում ստացել է 1-ին եւ 2-րդ աստիճանի այրվածքներ: Երեխան տեղափոխվել է այրվածքների կենտրոն:

Մարմնական վնասվածքներով վերոնշյալ հիվանդանոց է տեղափոխվել նաեւ Լենինգրադյան փողոցում վրաերթի ենթարկված 42-ամյա Ռոբերտը:

Հունիսի 20
Չեխովի 42 հասցեում տեղի ունեցած վթարից տուժել է երկու մարդ, որոնք անգիտակից վիճակում տեղափոխվել են «Մալաթիա» եւ «Երեբունի» բժշկական կենտրոններ:

Ջրվեժում տան տանիքից ընկել եւ բազմակի վնասվածքներով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 50-ամյա Ս. Գրիգորյանը:

Հունիսի 21
Մուշական թաղամասի 54 փողոցի 14 հասցեում 57-ամյա Մ. Ավոյանը դանակահարվել եւ որովայնի շրջանում ստացել է վերքեր: Տուժածը տեղափոխվել է «Երեբունի» բժշկական կենտրոն:

Կրծքավանդակի ծակած վերքերով վիրաբուժության ինստիտուտ է տեղափոխվել Մամիկոնյանց փողոցի 61 շենքի մոտ դանակահարված, 41-ամյա Ս. Դիլանյանը:

Հիդրոմետ ծառայություն . . Եղանակի տեսություն . .

Հունիսի 19-ին, 21-24-ը շրջանների մեծ մասում, 20-ին առանձին շրջաններում դիտվել են անձրեւ եւ ամպրոպ՝ 2-19 մմ (Դիլիջանում, Մասրիկում, Գորիսում՝ 25 մմ, Ստեփանակերտում՝ 26 մմ, Ապարանում՝ 36 մմ):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում եւ Սյունիքի հովիտներում՝ +27...+32, Տավուշում՝ +24...+29, Լոռիում եւ Արցախում՝ +22...+27, Լեռնային շրջաններում՝ +20...+25, Սյունիքի նախալեռներում՝ +17...+22 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանց-

վել է Լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ +4...+9, Տավուշում եւ Սյունիքի նախալեռներում՝ +7...+12, Արարատյան դաշտում եւ Սյունիքի հովիտներում՝ +12...+17, Արցախում՝ +14...+19 °C:

Հունիսի 27-ին եւ հուլիսի 1-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, 28-30-ը տեղ-տեղ սպասվում են կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ: Քամին հարավ-արեւմտյան՝ 2-7 մ/վրկ, 28-30-ը տեղ-տեղ հնարավոր է քամու ուժգնացում 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 26-27-ն աստիճանաբար կբարձրանա 2-4, 29-ի ցերեկը կնվազի 1-3 աստիճանով:

«Յրշեջները համայնքներում». արդեն Հայաստանի բոլոր համայնքներում

ԹՎ ՇՊԱՅՑ 1-ՇՄ չճաժ

Մենք կարող ենք հպարտանալ մեր կատարած աշխատանքով:

Այսօրվա հանդիպումը վկայում է ոչ միայն մեր անցած ճանապարհի արդյունավետությունը, այլև վստահեցնում, որ կարող ենք համարձակ նայել առաջ: Դրա ապացույցն է նաև այն, որ այս ընթացքում Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում ստեղծվել է նոր նախարարություն, եւ ես այսօր պատիվ ունեմ առաջին անգամ հանդիպելու պարոն նախարարին: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր բոլոր՝ հին եւ նոր գործընկերներին եւ հուսալ, որ այսուհետ մեր համագործակցությունն առավել ամուր ու արդյունավետ կլինի:

քականության ձեւավորման եւ իրականացման համար:

1988 թվականից ի վեր Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալությունը Հայաստանում իրականացրել է հունանիտար աջակցության եւ զարգացման բազմաթիվ ծրագրեր, որոնց թվում է նաև «Արձագանքը»: Այս ծրագրի հիմնական նպատակը Հայաստանում ապակենտրոնացված փրկարարական համակարգի հզորացումն է: Ծրագրի առաջին փուլում՝ 2004-2005 թթ. Լոռիի եւ Սյունիքի մարզերի 12 հրշեջ մասերում կազմակերպվել են հրահանգիչների պատրաստման եւ մեթոդաբանության դասընթացներ, որից հետո հրշեջ կայաններն ապահովվել են անհրաժեշտ փրկարարական գործիքներով ու

նպատակն է՝ բնական, տեխնածին, համաճարակային, էկոլոգիական եւ սոցիալական տարաբնույթ աղետները կառավարելու պատրաստ ունակ ու իրազեկ քաղաքացի ունեցող համայնքի (մարզի) ձեւավորումը՝ խոցելիության նվազեցման կայուն համակարգով:

Ըստ Էուլայան

«Արտակարգ ալիքի» տնօրեն Նիկոլայ Գրիգորյանը ներկայացրեց համառոտ ծանոթացրեց «Յրշեջները համայնքներում» հանրային իրազեկման ծրագրի էությունը.

- «Արձագանք» ծրագիրն անցած հրշեջներից, այսինքն մարդիկ, ովքեր նոր են ուսուցում ստացել, կատարելագործել իրենց մասնագիտական հմտությունները, յուրացրել նոր տեխնոլոգիաներ, ընդգրկվեցին «Յրշեջները համայնքներում» հանրային իրազեկման ծրագրում: Տավուշի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերից ընտրվեց քանչորս հրշեջ՝ յուրաքանչյուր հրշեջ մասից երկու հոգի: Նրանց համար անցկացվեց «Լրատվությունն արտակարգ իրավիճակներում» թեմայով մեկշաբաթյա դասընթաց, որից հետո բոլոր մասնակիցներին հանձնվեցին համապատասխան վկայականներ:

Մեկշաբաթյա ուսուցումից հետո հրշեջ-փրկարարներն իրենց տրամադրված դիրքերում նյութերով՝ պատասխաններ, օրացույցներ, բուկլետներ, ուղեցույցներ, գրքույկներ եւ բոյաչափեր, մեկնել են իրենց մարզեր ու նախօրոք կազմված գրաֆիկով այցելություններ կազմակերպել համայնքներ ու դպրոցներ, պատմել վտանգների ու դրանցից բխող ռիսկերի, դրանց կանխարգելման ու հետեւանքների նվազեցման միջոցառումների, ռիսկի կառավարման եւ «Արձագանք» ծրագրի մասին, համայնքապետարաններին ու դպրոցներին տրամադրել տեղեկատվական, ճանաչողական, խորհրդատվական եւ ուսուցողական նյութեր: Տավուշի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերի դպրոցներում հայտարարվել էր «Արտա-



կարգ իրավիճակները Ձեր կյանքում» թեմայով շարադրությունների ու «Աղետները եւ դրանց դեմ պայքարը՝ երեխաների աչքերով» նկարների մրցույթ: Լավագույն շարադրություններն ու նկարները տպագրվել են «Արտակարգ թերթում», զետեղվել «Արտակարգ ալիքի» եւ փրկարար ծառայության կայքերում, օգտագործվել են գրքույկներում, օրացույցներում եւ պատասխաններում: Աղետների ռիսկի նվազեցման համաշխարհային օրը մրցույթներում հաղթող ճանաչված երեխաները Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի կողմից պարգևատրվեցին արժեքավոր նվերներով:

Հ.Գ. Հունիսի 26-ը նշանավորվեց ոչ միայն արտակարգ իրավիճակների նախարարության ու Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության միջեւ հուշագրի ստորագրության փաստով, այլև, որ այդ օրը շվեյցարական գործակալության երեսնամյա գրասենյակի ծրագրերի համակարգող Սերգեյ Հովհաննիսյանը, որը նաև «Արտակարգ ալիքի» լավ բարեկամն է, նշում էր իր ծննդյան օրը: Ուրախությամբ միանում ենք բոլոր շնորհավորանքներին ու մաղթանքներին եւ մեր լավ գործընկեր-բարեկամին ցանկանում արտակարգ առողջություն, հաջողություններ ու ամենայն բարիք:

«Յրշեջները համայնքներում» կման եւս 4 տարի

ԱՒՆ ՀՓԾ տնօրեն, փ/ծ գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը շեշտեց, որ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալությունը նախարարության ամենահուսալի ու վստահելի գործընկերներից է:

Հարավային Կովկասում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գրասենյակի տարածաշրջանային տնօրեն պարոն Դերեկ Սյուլլերը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Սիեր Շահգելդյանը եւ «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի տնօրեն Նիկոլայ Գրիգորյանը ստորագրեցին համագործակցության հուշագիրը:

Գ. Բաղդասարյան



Պատմական ակնարկ

Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալությունը Հայաստանի հետ սկսել է համագործակցել 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո: Գործակալությունը Շվեյցարիայի արտոգործնախարարության մի մասն է եւ արտաքին քաղաքականության հիմնական գործիքը: Այն պատասխանատու է Շվեյցարիայի միջազգային զարգացման քաղա-

սարքավորումներով: Ստանալով գերազանց արդյունքներ՝ որոշում է կայացվել շարունակել ծրագիրը եւ ընդգրկել Հայաստանի բոլոր հրշեջ մասերը: Դրան զուգահեռ՝ 2007 թվականին ՀՀ երեք մարզերում (Տավուշ, Գեղարքունիք եւ Վայոց ձոր) առաջին անգամ իրականացվեց նաև «Յրշեջները համայնքներում» հանրային իրազեկման պիլոտային ծրագիրը, որը եւս մեծ արձագանքի արժանացավ: «Յրշեջները համայնքներում» ծրագրի

ՀՀ կառավարությունն արձագանքում է

ԹՎ ՇՊԱՅՑ 1-ՇՄ չճաժ

Հանձնաժողովի հունիսի 25-ի նիստի օրակարգի շրջանակներում քննարկվել է 3 հարց՝ Գյումրիում շինարարության իրականացման մեխանիզմները, Գյումրիում կատարվող հողհատկացման սկզբունքները եւ Ստեփանավանի ու Սպիտակի շինարարության ընթացքը:

Հանձնաժողովի նախագահ Տիգրան Սարգսյանը նիստի սկզբում ընդգծել է, որ հանձնաժողովը պետք է հետեւողական լինի երկրաշարժի հետևանքով անօթեան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ուղղությամբ պետության ստանձնած պարտավորությունները ժամանակին եւ ամբողջ ծավալով կատարելու գործում:

Մինչ օրակարգի հարցերի քննարկումը, վարչապետն առաջարկել է լսել աղետի գոտու հետ կապված, ոլորտի պատասխանատուներին տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին տեղե-

կատվությունը: Իսկ քննարկման ներկայացված հարցերից՝ Գյումրիում շինարարության իրականացման մեխանիզմների վերաբերյալ, նշվել է, որ խոսք է գնում 3 մեխանիզմի մասին.

1) երբ շինարարությունն իրականացվում է մասնավորի կողմից եւ 20-23 տարվա ընթացքում պետությունն ամեն տարվա իր բյուջեից որոշակի տոկոսներով համաչափ հատկացումներ է կատարում շինարարությունն իրականացնողին.

2) երբ հիփոթեքային հիմնադրամի ստեղծմամբ եւ այդ հիմնադրամի ներգրավված միջոցներով է իրականացվում շինարարությունը, ինչը համեմատաբար ավելի թանկ մեխանիզմ է, քան առաջինը: Սակայն ունի դրական կողմ՝ կարող է զգալիորեն նպաստել հիփոթեքային շուկայի ու նաև շինարարության ոլորտի զարգացմանն ու նոր մշակույթի ներդրմանը.

3) հաջորդ մեխանիզմը՝ վկայագրերի միջոցով բնակֆոնդում առկա բնակարանների գնման մեխանիզմն է:

Այս հարցի հետ կապված, լսելով ՀՀ քաղաքաշինության նախարարի եւ ՀՀ ԿԲ նախագահի զեկույցները, վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարել է ՀՀ քաղաքաշինության, ֆինանսների, տարածքային կառավարման, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների, ԿԲ-ի եւ Շիրակի մարզպետի ու Գյումրու քաղաքապետի ներգրավմամբ, աշխատանքային խմբի շրջանակներում, մշակել եւ մինչեւ ս.թ. օգոստոսի 1-ը հանձնաժողովին ներկայացնել շինարարության մրցույթի անցկացման հայեցակարգ՝ հստակ նկարագրելով մրցույթի ընթացակարգն ու մեխանիզմները:

Գյումրիում հողհատկացման սկզբունքների հարցի վերաբերյալ եւս տրվել է հանձնարարական, ըստ որի հանրապետության գլխավոր ճարտարապետը եւ Գյումրի քաղաքի ճարտարապետը՝ շահագրգիռ բոլոր կողմերի հետ, պետք է քննարկեն եւ դարձյալ մինչեւ օգոստոսի 1-ը ներկայացնեն եզրակացություն, թե նոր բազմաբնակարան շենքերի կառուցման նպատակով հողհատկացումները որքանով կբերեն Գյումրու գլխավոր հատակագծի վերանայման:

Հաջորդ հարցի՝ Ստեփանավանի շինարարության ընթացքի վերաբերյալ զեկույցվել է, որ 2009 թ. անօթեան ընտանիքների խնդիրն այստեղ ամբողջությամբ լուծված կլինի, իսկ Սպիտակում 354 անօթեան ընտանիքների խնդրի լուծման կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարն է Լոռու մարզպետին հանձնարարվել է՝ մինչեւ օգոստոսի 1-ը հստակեցնել քաղաքում բազմաբնակարան շենքերի կառուցման նպատակով հողհատկացման հարցերը եւ զեկույցել հանձնաժողովին: Աղետի գոտու 1800 միայնակ ծերերի բնակապահովման խնդիրը եւս եղել է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Քննարկվել է նրանց համար միասնական սպասարկման, հոգածության որոշակի հնարավորություններով առանձին շենքերի կառուցման անհրաժեշտության խնդիրը: Նշվել է, որ այդ շենքերում բնակվող միայնակ ծերերը պետք է գտնվեն պետական մշտական հոգածության ներքո: Հանձնարարվել է ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝ տեղական իշխանությունների հետ քննարկել վերոնշյալ հատուկ շենքերի կառուցման հետ կապված մանրամասները:



ՀԱՍՏՊԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐ



ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ուղերձը նվիրված թմրանյութերի չարաշահման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրվան



26-ը հունիսի

Տասը տարի առաջ Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունները, արձագանքելով թմրամիջոցների համաշխարհային խնդրին, հրավիրեցին Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջան, որտեղ հանձն առան իրականացնել թմրամիջոցների թե՛ առաջարկի, թե՛ պահանջարկի կրճատման վճռական գործողությունների պլան:

Այսօր թմրամիջոցները շարունակում են կործանել մարդկային կյանքեր, ծնել հանցագործություն և սպառնալ կայուն զարգացմանը: Սակայն մենք այժմ ավելի լավ ենք պատկերացում, թե ինչպես դիմակայել թմրամիջոցների չարաշահմանն ու ապօրինի շրջանառությանը: Քաղաքականություն որոշողների համար հիմք կարող են ծառայել թմրամիջոցներից կախվածության և դրանց

օգտագործման միտումների վերաբերյալ անընդհատ կուտակվող փաստերը: Միջազգային համագործակցությունը և փորձագիտական օժանդակությունը նպաստում են օրենքի հարկադիր կատարման կարողությունների ավելացմանը: Կայուն այլընտրանքներ տրամադրելով ֆեմերներին՝ զարգացման օժանդակության մեծացող ծավալներն օգնում են նվազեցնել աղքատությունը և արգելված մշակաբույսերի վաճառքը: Կանխարգելման և բուժման նկատմամբ ավելի մեծ ուշադրությունը հանգեցրել է այն բանին, որ առողջությունը հայտնվել է թմրամիջոցների վերահսկման ռազմավարությունների կենտրոնում և օգնում է ՄԻԱՎ/ԶԻՄ-ի տարածման տեմպերի դանդաղեցմանը: Միաժամանակ, ինչպես համայնքների ներսում, այնպես էլ պետությունների միջև զնալով ամրապնդվում է համաձայնություն այն հարցում, որ թմրամիջոցների վերահսկողությունը ընդհանուր պարտականություն է, և բոլորն ունեն իրենց դերը:

Մենք դեռ շատ անելիքներ ունենք, որպեսզի կարողանանք մեղմել մեր խոցելիությունը թմրամիջոցների նկատմամբ: Քրեական արդարադատության թույլ համակարգեր և օրենքի հարկադիր կատարման սահմանափակ կարողություններ ունեցող պետություններն օժանդակության կարիք ունեն: Միայն օժանդակության շնորհիվ այդ պետությունները կկարողանան նվազեցնել թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, որը սփռում է հանցագործություն, կոռուպցիա և անկայունություն, որոնք էլ, վերջին հաշվով, վտանգում են Հազարամյակի զարգացման նպատակների հաջող իրականացումը:

Նշելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 60-րդ տարեդարձը, ես հիշեցնում եմ բոլոր անդամ պետություններին թմրամիջոցներից կախում ունեցող բանտարկյալների կամ թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների համար ազատագրվածների իրավունքները, հատկապես նրանց կյանքի և արդար դատի իրա-

վունքները լիարժեք կերպով հարգելու իրենց պարտավորությունը:

Միաժամանակ կոչ եմ անում անդամ պետություններին ապահովելու, որ նրանք, ովքեր պայքարում են թմրամիջոցներից ծերացածներին համար, հավասարապես կարողանան օգտվել առողջապահական ու սոցիալական ծառայություններից: Ոչ ոք չպետք է խարսման կամ խտրականության ենթարկվի այն պատճառով, որ թմրամիջոցներից կախում ունի:

Անցած տասնամյակի ընթացքում մեր միացյալ ջանքերը հսկայական նշանակություն են ունեցել ամբողջ աշխարհում թմրամիջոցների խնդրի մասին մեր ունեցած պատկերացումների ընդլայնման համար, ամրապնդել են թմրամիջոցների անհատներին, նրանց մերձավորներին, համայնքներին և պետություններին պատճառած վնասների նվազեցման մեր կարողություններն ու վճռականությունը: Եկեք թմրամիջոցների չարաշահման դեմ միջազգային այս օրը յուրաքանչյուրս կատարենք դրանց բերած վնասը կանխելու և նվազեցնելու մեր պարտականությունը և այդպիսով աշխարհը կառուցենք ավելի առողջ ու անվտանգ ապրելու համար:

Հակահամաճարակային միջոցառումներ արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ

ԵՒՇՁԱԿՑ ԿՅԵԱՆՑ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐ

Աղետի համաճարակային օջախ համարվում է այն տարածքը, որտեղ ժամանակի և տարածության որոշակի սահմաններում տեղի է ունեցել ինֆեկցիոն հիվանդության հարուցիչով մարդկանց վարակում: Օջախի սահմանը որոշվում է ինֆեկցիոն հիվանդանոցների և հարուցչի փոխանցման ուղիների հնարավորությունների առկայությամբ:

Բարդ համաճարակաբանական իրադրությամբ արտակարգ իրավիճակների դեպքում կանխարգելիչ հակահամաճարակային միջոցառումներն անցկացվում են երեք հիմնական ուղղությունում:

- աղետի գոտում ինֆեկցիոն հիվանդությունների տարածման կանխում և համաճարակի օջախների ոչնչացում:
 - աղետի շրջան ինֆեկցիոն հիվանդություններ բերելու կանխում:
 - շրջանից ինֆեկցիոն հիվանդությունների դուրս բերման կանխում:
- Սկսում է աշխատել սանիտարահամաճարակային հանձնաժողովը, և վճռվում է օջախի սահմանների պաշտպանելու, հսկիչ-անցագրային ու սանիտարահսկիչ կետեր ծավալելու հարցը:
- Բուն օջախում վտանգավոր ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ հակահամաճարակային միջոցառումներն իրականացվում են միասնական սկզբունքներով:
- վտանգավոր հիվանդություններով հիվանդների հայտնաբերման, հոսպիտալացման և բուժման կազմակերպում:
 - հիվանդի նախնական մեկուսացում:
 - ախտորոշման հաստատում, տարահանում, այնուհետև՝ հոսպիտալացում, բուժում:
 - հայտնաբերված հիվանդի մասին անհապաղ ծանուցում:
 - օջախի (բռնկման) համաճարակաբանական հետազոտում:
 - կարանտինային կամ սահմանափակիչ միջոցառումներ:
 - հիվանդների հետ շփված անձանց հայտնաբերում, հետազոտում, մեկուսացում և հսկում:
- Համաճարակային օջախներում ախտահանման և կրծողներին ոչնչացնելու աշխատանքի իրականացում:
- շտապ, անհետաձգելի և յուրահատուկ կանխարգելման իրականացում:
 - սննդամթերքի և խմելու ջրի սանիտարական փորձաքննություն:
 - նախնական հոսպիտալացում և բոլոր կասկածելիների հետազոտում:
 - մահացածների հայտնաբերում, դիակների ուսումնասիրում և թաղում:

• սանիտարապոստիվային աշխատանք:
Համաճարակային օջախում սահմանվում է հատուկ ռեժիմ՝ կարանտին: Այն իրենից ներկայացնում է համապետական միջոցների մի համակարգ, որը նախատեսում է ռեժիմային, աղմուկիստրատիվ-տնտեսական միջոցառումների անցկացում՝ ուղղված օջախում վարակիչ հիվանդությունների տեղայնացմանը: Ամմիջապես որոշում են օջախի սահման-



ները՝ հաշվի առնելով հարուցչի փոխանցման մեխանիզմը, տարածողների էկոլոգիան և անցկացումը օբյեկտի միջոցառումներ: Օբյեկտից հեռավորվում է բժշկական համալիր միջոցառումների այն համակարգը, որի նպատակը վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ շփումներ ունեցած և կարանտինի գոտուց դուրս եկած առողջ մարդկանց մեկուսացնելն ու զննելն է:

Կարանտինը կարող է փոխարինվել օբյեկտից հեռավոր այնպիսի վարակների դեպքում, ինչպիսիք են բրուցելյոզը, որովայնային տիֆը, ռիկետսիոզները, զանգուղեղային բորբոքումը, սնկային հիվանդությունը և այլ վարակներ, որոնց ժամանակ մարդն ինֆեկցիայի աղբյուր կամ վտանգավոր ինֆեկցիաների վարակակիր չէ:

Օբյեկտից հեռավոր ժամանակ իրականացվում են:
• օբյեկտից հեռավոր տարածքից տրանսպորտի բոլոր տեսակների դուրս գալու, մտնելու

և այդտեղով տարանցելու սահմանափակում:

- արտաքին միջավայրի օբյեկտների վարակազերծում:
 - վարակիչ հիվանդների հայտնաբերում, նրանց մեկուսացում և հոսպիտալացում:
 - վնասված, ախտահարված բնակչության սանիտարական մշակման անցկացում:
 - վարակման սպառնալիքի ենթարկված անձանց մեջ շտապ պրոֆիլակտիկայի իրականացում:
 - անցկացվող սանիտարափոխանակում և հակահամաճարակային միջոցառումների վրա բժշկական հսկողության ուժեղացում:
 - վարակված գյուղատնտեսական կենդանիների և անասնապահական մթերքների վարակվածության վրա անասնաբուժամանրէաբանական հսկողության ուժեղացում:
 - բժշկական հաստատությունների աշխատանքում հակահամաճարակային ռեժիմի մտցում:
- Որպեսզի հասկանալի լինեն համաճարակային օջախի առաջացման և տարածման պատճառները կոնկրետ պայմաններում, ինչպես նաև օջախի վերացման նպատակով համալիր միջոցառումներ մշակելը, անցկացվում է սանիտարահամաճարակային հետախուզություն, որի հիմնական խնդիրները համընկնում են մանրէաբանական հետախուզության խնդիրներին:

Մանրէաբանական հետախուզությունը իրականացվում է կենսաբանական զենք կիրառելու փաստը հաստատելու, համաճարակային իրադրությունը գնահատելու և ինդիկացիայի անցկացման համար մուռ ընտրելու համար: Հետախուզության արդյունքում պետք է հաստատվեն և նշանակեն վարակի օջախի կողմնորոշիչ սահմաններն ու վարակված տարածքի մակերեսը, որոշվեն այնտեղ գտնվող բնակչության թվաքանակը, օջախը վերացնելու և վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու միջոցառումների ծավալը և բնույթը:

Բարձր վարակայնություն հայտնաբերելու դեպքում իրականացվում է շտապ կանխարգելում, որի նպատակն է՝ կանխել մարդկանց մեջ վարակիչ հիվանդությունների ծագումը: Շտապ կանխարգելումն սկսում են անհապաղ՝ վտանգավոր ինֆեկցիաներով մարդկանց վարակվելու կամ հիվանդանալու մասին տեղեկատվություն հայտնվելու պահից, ինչպես նաև չհաստատված ծագում ունեցող վարակիչ հիվանդությունների բռնկումների ժամանակ: Անհետաձգելի կանխարգելումը բաժանվում է ընդհանուրի և հատուկի:

Աղետի գոտում, մինչև միկրոօբանիզմի

տեսակի հաստատումը, 2-5 օրվա ընթացքում անցկացվում է ընդհանուր շտապ կանխարգելում՝ գործողության լայն սպեկտր ունեցող հակաբիոտիկների կամ քիմիական պատրաստուկների օգնությամբ: Այդպիսի կանխարգելման հիմնական միջոցն է դոկլիպինը, իսկ պահեստայիններն են՝ ռիֆամպինը, տետրացիկլինը և սուֆիսալանը: Հաստատված շտապ կանխարգելման շարունակելիությունը կախված է ինֆեկցիոն հիվանդության ծեսից (ինկուբացիոն շրջանի ժամկետից), օգտագործվող հակամանրէային պատրաստուկների հատկություններից, ինչպես նաև նախապես կիրառված ընդհանուր շտապ կանխարգելումից: Եթե հայտնաբերված միկրոօբանիզմները զգայուն են կանխարգելման ընթացքում կիրառված պատրաստուկի նկատմամբ, ապա այն ընդունելու տեղությունը հաշվի է առնվում հատուկ կանխարգելում անցնելու ժամկետը որոշելիս: Իսկ եթե պարզվի, որ դրանք տվյալ միջոցի նկատմամբ դիմադրողական են, ապա չեն օգտագործվում:

Վարակի օջախներում հատուկ կանխարգելում անցկացվում է նաև հարուցչի հայտնաբերումից հետո: Դրա համար կարող են օգտագործվել ինչպես մոնոպատվաստանյութեր (ժանտաֆստի, տուլարեմիայի, բրուցելյոզի և այլի դեմ), այնպես էլ զուգորդված պատվաստանյութերի շիճուկներ: Որոշ դեպքերում կարելի է համակցել շտապ և անհետաձգելի կանխարգելման միջոցները (օրինակ, բուտոլիզմի, բժավոր տիֆի, խոլերայի, ժանտաֆստի, տուլարեմիայի, սիբիրյան խոցի, բրուցելյոզի դեպքերում):

Անհրաժեշտության դեպքում աղետի գոտուց կատարվում է հիվանդների տարահանում:

Այսպիսով, հակահամաճարակային աշխատանքները համարվում են բնակչությանը շտապ, անհետաձգելի բուժօգնություն ցույց տալու պետական համակարգի հիմնական բաղադրանքներից մեկը:

Վերոնշյալ միջոցառումները, որոնք իրականացվում են ԱՌ-ում, տարբերվում են սովորական կանխարգելող և հակահամաճարակային միջոցառումների համակարգերից: Հակահամաճարակային միջոցառումները հստակ տարբերակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր խնդիրների առանձնահատկությունները, աղետի կամ վթարի տեսակները, տիպերը, ինչպես նաև սանիտարահամաճարակային իրավիճակի համար դրանց հետեւանքները: Հատկապես խիստ կարեւոր է հակահամաճարակային աշխատանքների ղեկավարումը ճիշտ, կազմակերպված իրականացնելը:

Նյութը պատրաստեցին Նաիրա Եղիազարյանը և Սամվել Սիմոնյանը

Մարդասպան ավտոմեքենաները

Ե՛լ ՇՅԽԱ՞ Կ՞Յ Է՛ն՝ Ո՞Յ Ս՞Յ ՆձՈՒ

Քենեդիի եւս մեկ առեղծված

1963 թ. նոյեմբերի 22-ի առավոտյան ԱՄՆ-ի նախագահ Ջոն Բենեդիկտ կոչվող հետ ժամանում է Դալլաս՝ ընտրողների հետ հերթական հանդիպման: Պատվավոր հյուրերին դիմավորում է Տեխասի նահանգապետ Ջոն Բոնոլին: Մոտավորապես կեսօրին Քենեդիի ամուսինները եւ նրանց ուղեկ-



ցող անծինք տեղավորվում են «Կադիլակ» մակնիշի նախագահական լիմուզինի մեջ: Մեկնումը մի փոքր հետաձգվում է, քանի որ վարորդը որոշում է եւս մեկ անգամ ստուգել ավտոմեքենայի շարժիչը: Ամեն ինչ նորմալ էր, եւ նրանք ճանապարհ են ընկնում: Անվտանգության աշխատակիցները քայլում էին փողոցով դանդաղ ընթացող ավտոմեքենայի կողքով: Հանկարծ մի կրակոց է լսվում: Նախագահի գլուխը ցնցվում է: Ժակլինը հիստերիկ ձայն է: Վարորդը ոտքը սեղմում է գազի ոտնակին, սակայն մեքենան տեղից չի շարժվում: Կրկին կրակոցներ են լսվում: Ջոն Բենեդիկտ տեսնում է կրկողից եւ ծանրորեն ընկնում կնոջ ձեռքերի վրա: Ժակլինը բղավում է. «Աստված իմ, նրանք սպանեցին Ջոնին»: Նույն վայրկյանին լիմուզինը տեղից պոկվում է եւ վտանգավոր գոտուց հեռու պանում: Քսանհինգ րոպե անց ԱՄՆ-ի 34-րդ նախագահ Ջոն Բիցցերալդ Քենեդիին մահանում է՝ այրպես էլ չզալով գիտակցության:

Ինչու՞ է միանգամայն սարքին ավտոմեքենան հանկարծակի կանգ առնում՝ վերածվելով մարդասպանի համար հիանալի թիրախի: Չէ՞ որ առաջին կրակոցից հետո նախագահը դեռ ողջ էր, սակայն երբ վարորդը սեղմում է գազի ոտնակը, մեքենան հրաժարվում է տեղից շարժվել: Այդ վայրկյանները նախագահ Քենեդիի համար ճակատագրական են լինում:

Քեդեցկուրյան գոհը

1982 թ. սեպտեմբերի 13-ին հանելուկալի պայմաններում մահանում է դերասանուհի, արքայադուստր Գրեյս Բեյլին: Հանապարհին ավտոմեքենայի շարժիչը դադա-



րում է աշխատել: Վարորդը մեքենայից դուրս է գալիս, որպեսզի պարզի, թե ինչ է պատահել: Կարծես ամեն ինչ կարգին էր: Ավտոմեքենայի մեջ նստած արքայադուստրը ճանաչողին աճած մի գեղեցիկ ծաղիկ է տեսնում ու վարորդին խնդրում քաղել այն իր համար: Այդ պահին ավտոմեքենայի շարժիչը կրկին իրեն-իրեն գործի է ընկնում: Մեքենան թափ է հավաքում եւ, քանդելով ճանապարհի եզրին կառուցված ցածր արգելապատնեշը, գահավիժում ծորը...

Շատերի համար դեռեւս առեղծվածային է մնում նաեւ մեկ այլ արքայադուստր՝ Դիանայի մահը: Արքայադուստրը եւ նրա ընկեր Դոդի ալ Ֆայեդը մահանում են 1997 թ. օգոստոսի 31-ին Փարիզում տեղի ունեցած ավտոմեքենայի հետեւանքով, որի հանգամանքները մինչ օրս լիովին բացահայտված չեն: 196 կմ/ժ արագությամբ սլացող «Մերսեդես» անսպասելիորեն բխվում է թունելի բետոնե պատին:

Երկու անգամ

Ավտոմեքենային հանելուկների շարքին է դասվում նաեւ ֆրանսիացի հայտնի գրող Ալբեր Բամյուի մահը:



1960 թ. հունվարի 4-ին նա «Ռենո» մակնիշի ավտոմեքենայով Պրովանսից Փարիզ էր գնում: Մեքենան վարում էր Բամյուի մտերիմներից մեկի զարմիկ Միշել Գալիմարը: Վերջինս, որ շատ փորձառու վարորդ էր, հանկարծ կտրուկ թեքում է դեկը, եւ մեքենան բախվում է ճանապարհի աճած ծառին: Գրողը տեղում մահանում է, իսկ վարորդը ծանր վնասվածքներով տեղափոխվում է հիվանդանոց եւ մի քանի օր անց մահանում: Վարորդի կինն ու դուստրը, որոնք վթարի պահին նույնպես գտնվում էին ավտոմեքենայի մեջ, ողջ են մնում: Հետագայում նրանք ոստիկաններին պատմում էին, որ Միշելը բոլորովին էլ չէր ցանկանում դեկը շրջել: Ավտոմեքենան, կարծես, ինքնակամ է թեքվում:

Որոշ ժամանակ անց Բամյուի երկրպագուհիներից մեկը գնում է նրա ավտոմեքենան եւ վերանորոգում այն: Նա պնդում էր, որ այդ մեքենան վարելով, ավելի լավ է հասկանում իր կուռքին: Սակայն նրանց «փոխըմբռնումը» երկար չի տևում: Գրողի մահից ուղիղ մեկ ամիս անց, ճանապարհին կինը չի կարողանում կառավարել ավտոմեքենան, եւ չարաբաստիկ «Ռենոն» կրկին բախվում է ծառին: Կինը տեղում մահանում է: Դրանից հետո ավտոմեքենան այլեւ չեն վերանորոգում եւ ուղարկում են աղբանոց:

Ճարական վրեժ

Պարանորմալ երեւոյթների որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ մար-

դասպան-ավտոմեքենաների թվին է պատկանում նաեւ ռուսական վերջին ցարի՝ Նիկոլայ 2-րդի «Դելանի-Բելվիլ» ավտոմեքենան: Ճիշտ է՝ ցարը նրանից դժգոհելու առիթ չէր ունեցել, սակայն հեղափոխությունից հետո ցարական ավտոմեքենան, ըստ երեւույթին, չի ցանկանում ծառայել բոլշեւիկներին: Ցարին գահընկեց անելուց հետո մեքենան անցնում է ժամանակավոր կառավարության նախագահ Ա. Կերենսկուն: 1917 թ. ապրիլին նա ցարական ավտոմեքենայով գնում է Ցարսկոյե Սելո՝ Նիկոլայ 2-րդի հետ հանդիպման, եւ ականատեսներ-



րի վկայությամբ, վերջինիս բոլորովին դուր չի գալիս այն, որ իր մեքենայով ուրիշներն են երթելու:

Շուտով Կերենսկին ստիպված է լինում փախչել Ռուսաստանից, իսկ ավտոմեքենայի նոր տերը դառնում է Վ. Լենինը: 1918 թ. հունվարին հեղափոխության առաջնորդի «Դելանին» հայտնվում է էսեռների կրակոցների տակ: Այդ ժամանակ Լենինը չի տուժում, սակայն նրան ուղեկցող շվեյցարացի կոմունիստ Պլատենը ծանր վիրավորվում է:

Երբ խորհրդային կառավարությունը տեղափոխվում է Մոսկվա, նախկին ցարական ավտոմեքենան անցնում է Պետրոգրադի արտակարգ հանձնաժողովի (Всероссийская чрезвычайная комиссия) նախագահ Մ. Ուրիցկուն: 1918 թ. օգոստոսի 30-ին նրան սպանում է Կանեգիսեր ազգանունով մի ուսանող:

Հետազոտողները ենթադրում են, որ հեղափոխականների նկատմամբ ցարի վերաբերմունքը կարող էր բացասական էներգիայի տեսքով փոխանցվել ավտոմեքենային, եւ «Դելանին» վրեժ է լուծել նրա փոխարեն:

Երբ ասեւրոյունը փոխադարձ է

Գրեթե յուրաքանչյուր վարորդ կարող է պատմել մի քանի դեպք, որոնց ժամանակ ավտոմեքենան իրեն բանական, հասկացող եւ ինքնուրույն էակի նման է պահել:

1978 թ. Ֆլորիդայում ապրող մի կին համարյա ֆանտաստիկ հանգամանքներում գոհ է գնում իր սեփական ավտոմեքենային: Ինչպես հետագայում պատմում էին նրա գործընկերները, կինը չափազանց անխնամ վերաբերմունք էր դրսևորում մեքենայի նկատմամբ: Օրերից մի օր, երբ նա կայանում է ավտոմեքենան՝ խանութից գնումներ անելու համար, մեքենայի շարժիչն ինքն իրեն կրկին գործի է ընկնում, որից հետո ավտոմեքենան ինչ-որ անհավանական կերպով հասնում է իր տիրուհու հետեւից ու պանում ուղիղ խեղճ կնոջ վրա... Սակայն դա մետաղե մարդասպանին բավարար չի թվում, եւ նա շրջվելով եւս մեկ անգամ անցնում է կնոջ մարմնի վրայով, հետո՝ եւս մեկ անգամ, հետո՝ էլի... Ականատեսները պատմում են, որ ապշահար մարդկանց աչքի առաջ «կատաղած» ավտոմեքենան շուրջ 15 րոպե գնում-գալիս էր կնոջ մարմնի վրայով մինչեւ սպանում է նրան, եւ պապ նույնքան անհասկանալի ձեւով կանգ առնում:

2005 թ. ապրիլին մեծ Բրիտանիայում մոտավորապես նույն իրավիճակում է հայտնվում 36-ամյա Ալիսոն Թեյլորը: Նա

այնպես է բարկանում իր «Պեժոյի» վրա, որը ոչ մի կերպ չէր ցանկանում տեղից շարժվել, որ սկսում է մուրճով հարվածել շարժիչին: Ավտոմեքենան «վիրավորվելով» գործի է ընկնում եւ... անիվների տակ առնում իրեն նեղացնող կնոջը:

Հետաքննության ընթացքում պարզվում է, որ մեքենայի մեջ բանալի չկար, եւ ընդհանրապես, այն բավական անսարք էր: Սկզբում այն ընդամենը վայր է գցում Ալիսոնին, սակայն վերջինս ընկնելիս բռնում է գազի պարանիկից, որի հետեւանքով ավտոմեքենան արագ շարժվում է առաջ եւ սպանում նրան: Հարազատների խոսքերով՝ այդ ողբերգական պատահարից ոչ շատ առաջ Ալիսոնը հայտարարել էր, թե ցանկանում է ազատվել այդ «հիմար մեքենայից»:

Հետաքրքիր է, որ որպես կանոն մարդասպան են դառնում հիմնականում թանկարժեք, «արիստոկրատ» ավտոմեքենաները, որոնք պատկանում են հանրաճանաչ ու հարուստ մարդկանց: Դրանք մեծամասամբ այն մեքենաներն են, որոնցից արտադրվել է չափազանց սահմանափակ քանակությամբ:

Շատ վարորդների կարծիքով՝ մեծ նշանակություն ունեն նաեւ ավտոմեքենայի համարը եւ գույնը: Առաջինի մասին, թեքուս, ավելորդ է խոսել, որովհետեւ բոլորին է հայտնի, որ մեր հայրենակիցները ոչ ջանք են խնայում, ոչ միջոցներ, որ իրենց սիրասուն ավտոմեքենայի համար, այսպես ասած, «գոլդ» համարանիշ ձեռք բերեն:

Գույնի առումով, օրինակ, ֆրանսիացի գիտնականները պարզել են, որ ամենամեծ վտանգը մետաղափայլ կամ արծաթագույն մեքենաներն են: Նրանց հաշվարկներով այս մեքենաները սպիտակներից երկու անգամ ավելի քիչ են հայտնվում պատահարների մեջ: Չնայած սա կարող է կասկած լինել նաեւ տվյալ մարդու ճաշակի կամ բնավորության հետ: Միգուցե արծաթափայլ ավտոմեքենա նախընտրող վարորդներն առավել զգույշ են ու խելամիտ: Գիտնականների կարծիքով՝ ճանապարհներին առավել վտագավոր են սեւ, դարչնագույն եւ կանաչ ավտոմեքենաները:

Այնուամենայնիվ, մի կողմ թողնելով ավտոմեքենայի մակնիշը, գույնն ու համարանիշը, կարծում ենք, որ անհրաժեշտ է խնամքով վերաբերվել մարդու ծառայող բոլոր իրերին եւ դրանք մշտապես պահել սարքին վիճակում, ինչպես նաեւ միշտ ինչ-էլ անվտանգ երթելույթյան կանոնների մասին:



Հ. Գ. Պրոֆեսոր Դան Քրայենուորթը, որը շարունակել էր «մարդասպան-մեքենայի» հերթական գոհ դարձած իր բարեկամի՝ դատական բժիշկ Ջոնաթան Բարչի գործը, նույնպես չի կարողանում ավարտին հասցնել ուսումնասիրությունները: Աշխատանքն սկսելուց մոտ մեկ տարի անց նրան սպանում է... խոհանոցային կոմբայնը: Պրոֆեսորի երկար մագերը փաթաթվում են կոմբայնի շարժիչին եւ, պարանոցի շուրջ պտտվելով, խեղդում նրան...

Պատրաստեց
Գոհար Բաղդասարյանը

Աղետների և ճգնաժամերի ժամանակ ՄԻԱՎ-ի մարտահրավերին արձագանքելը

Համաշխարհային աղետների զեկույց 2008

Համաճարակի դեմ ավելի արդյունավետ պայքարելու համար բոլոր մարդասիրական ծրագրերը պետք է հաշվի առնեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի բարդ և երկարատև բնույթը

Այս տարվա Աղետների համաշխարհային զեկույցը երկարատև ու բարդ աղետ է համարում ՄԻԱՎ-ը: Այդ աղետին ավելի արդյունավետ արձագանքելու համար աղետների կառավարման ծրագրերի թե՛ նախապատրաստման և ռիսկի նվազեցման, թե՛ աղետների արձագանքման և վերականգնման փուլերում պետք է ավելի բարձր առաջնայնություն տրվի ՄԻԱՎ-ին:

Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի (ԿԽ/ԿՄ ՄՖ) կողմից հրատարակվող Աղետների համաշխարհային զեկույցը (Ձեկույց) կոչ է անում կառավարությունների և տեղական համայնքների հետ համագործակցող մարդասիրական կազմակերպություններին՝ ընդլայնել ՄԻԱՎ-ի կանխարգելմանը, բուժմանն ու խնամքին, ինչպես նաև դրա հետևանքով պիտակավորմանն ու խտրականությանն ուղղված ծրագրերի մասշտաբն ու շրջանակները:

Ըստ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի միացյալ ծրագրի, օրեկան համարյա յոթ հազար մարդ ծեղծ է բերում ՄԻԱՎ, և, համաճարակի տարածման հետագծում առանց մեծ փոփոխության, ՁԻԱՅ-ը դեռևս կխլի միլիոնավոր կյանքեր: Սկսած 1981 թվականից, ավելի քան 25 միլիոն մարդ է մահացել ՁԻԱՅ-ից և 33 միլիոնն այժմ ապրում են ՄԻԱՎ-ով:

ՄԻԱՎ-ն աղետ է մի քանի մակարդակներում: Ենթասահարյան Աֆրիկայի ամենախտահարված երկրներում, որտեղ տարածվածության մակարդակը հասնում է 20 տոկոսի, ծեղծբերման հավանականությունն աճում է, իսկ կյանքի հավանականությունը՝ կիսվում: Աշխարհում առանձնացված խմբերի համար (ներառյալ թմրամուլներ, մարմնավաճառներ, արվամուլներ) տարածվածության աստիճանը բարձրանում է: Այս ամենից զատ, այդ մարդիկ հաճախ հանդիպում են պիտակավորման, հանցագործության և, շատ փոքր հնարավորություն ունեն (թե ունեն) օգտվելու կանխարգելման և բուժման ծառայություններից: Աղետները՝ մարդասիրական և բնական, քայքայում են հիմնական ծառայությունները, խթանում են համաճարակի մյուս հարուցիչները և կարող են բարձրացնել մարդկանց խոցելիությունը ՄԻԱՎ-ի նկատմամբ: ՄԻԱՎ-ով վարակված մարդիկ աղետների և ճգնաժամերի ժամանակ պատկանում են ամենախոցելի խմբերի շարքին:

«Այս տարվա Աղետների համաշխարհային զեկույցն առաջինն է, որ կենտրոնանում է այս երեւոյթի վրա, ինչը, սակայն, լավ հիմնավորում ունի: ՄԻԱՎ-ի հետևանքով մասնատված ենթասահարյան Աֆրիկայի երկրների և աշխարհի


բազմաթիվ առանձնացված խմբերի համար, որոնք դատապարտված են մահվան, հիվանդության և աղքատության, ՄԻԱՎ-ն անկասկած աղետ է», - ասում է ԿԽ/ԿՄ ՄՖ գլխավոր քարտուղար Մարկկո Նիսկալան: «Մարդասիրական հասարակությունը պետք է արձագանքի ՄԻԱՎ-ի մարտահրավերին, մասնավորապես կլիմայի փոփոխության, միգրացիայի և բռնության ապագա մարտահրավերների համատեքստում, որոնք գերիշխում են շատ հասարակություններում»:

Ձեկույցը ոչ միայն վերլուծում է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հետեւանքով հսկայական տնտեսական, սոցիալական և մտավոր սպանող, այլև մանրամասնում այն բոլոր խոշոր խնդիրները, որ համաճարակը ներկայացնում է կառավարություններին, մարդասիրական կազմակերպություններին և տեղական համայնքներին: ՄԻԱՎ-ը պետք է զուգահեռաբար ինտեգրվի մարդասիրական օգնության բոլոր ձեւերում՝ ներառելով առողջապահությունն ու խնամքը, սնունդը, սոցիալական ծրագրերն ու անվտանգությունը թե՛ արտակարգ իրավիճակների գործողություններում, թե՛ երկարատև զարգացման ծրագրերում: ՄԻԱՎ-ը, Ձեկույցի պնդմամբ, չպետք է արժանանա ավելի թույլ ուշադրության այն պատճառով, որ այլ առաջնայնություններ թվում են ավելի կարեւոր: «ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համաճարակն աղետ է, որի մասշտաբն ու ծավալը կարելի է կանխել: Անտեսույն, պիտակավորումը, քաղաքական անգործությունը, անտարբերությունն ու մերժումն օժանդակում են մահվան միլիոնավոր դեպքերին», - բացատրում է Լինդսեյ Նայ-

թը՝ Աղետների համաշխարհային զեկույցի խմբագիրը: «Ձեկույցը փարատում է այն թյուր կարծիքը, թե իբր փախստականները, միգրանտները, հակամարտությունից ու աղքատությունից փախչող մարդիկ ՄԻԱՎ են տարածում: Մենք բոլորս պետք է անենք շատ ավելին՝ արմատախիլ անելու պիտակավորումը: Կարելի է նաեւ ընդունել, որ ՄԻԱՎ-ին անդրադառնալը պահանջում է ավելի երկարատև գործունեություն, քան սովորական աղետների արձագանքումը», - ավելացնում է նա:

Բյուրոկրատիայի դեմ պայքարը, ընթացակարգերի պարզեցումը, կորոզիանցման բարելավումը, սեռական անհավասարությանը դիմադրելը և տեղական համայնքներին մասնավորապես ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց գործունեության մեջ ներգրավելը Ձեկույցում առաջարկված լուծումներից են, որ կբարելավեն ՄԻԱՎ-ին ուղղված ծրագրերի արդյունավետությունը: Նաեւ ուսումնասիրվում են արտակարգ իրավիճակներին ավելի լավ պատրաստվածությունը, ռիսկի նվազեցումը և աղետի գոտիներում ապրող մարդկանց վրա ՄԻԱՎ-ի ազդեցության հետագա ուսումնասիրությունը:

Աղետների համաշխարհային զեկույցը նաեւ ներառում է հատկապես Բելգիայում Լուվանի կաթոլիկ համալսարանի բազային՝ Աղետների համաճարակագիտության ուսումնասիրության կենտրոնի կողմից տրամադրված աղետների վիճակագրության և գլոբալ միտումների վերլուծության վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, 2007 թվականին աղետները համեմատաբար ավելի պակաս էին և ավելի քիչ մահաբեր, քան նախորդ



տարիներին, սակայն, բնական աղետներից՝ ցիկլոններից, փոթորիկներից, երաշտից, աշխարհաֆիզիկական աղետներից տուժած մարդկանց ընդհանուր թիվը կտրուկ աճեց 2006-ի համեմատ:

2007-ին ամբողջ աշխարհում գրանցվել է 405 բնական աղետ՝ 2006-ի 423-ի դիմաց: Չնայած զոհերի թիվը (16.679) տասնամյակի համար ամենացածրն էր, սակայն այդպիսի աղետներից տուժածների թիվը 2007-ին հասավ 201 միլիոնի՝ անցյալ տարվա համեմատ 40 տոկոս աճ:

Ի հակադրություն, տեխնածին աղետների թիվն ու ազդեցությունը, ներառյալ արդյունաբերական, տրանսպորտային և այլ վթարներ, ամենացածրն է տասնամյակի ընթացքում:

Ընդհանուր թվով՝ գրանցվել է 252 տեխնածին աղետ, մահվան դեպքերը պակասել են՝ հասնելով 6.488-ի, իսկ տուժածների թիվը (47.000) 2006-ի համեմատ պակասել է 70 տոկոսով:

Ընդհանուր առմամբ, բնական և տեխնածին աղետների հետևանքով զոհված 23.167 մարդկանց թիվն ամենացածրն էր տասնամյակի ընթացքում, որը շատ ավելի ցածր է տասնամյակի 113.000 միջին թվից:

ՀՀ կենտրոնական բանկը զգուշացնում է «նիգերիական սխեմա» կոչվող խարդախություններ

Վերջին շրջանում հաճախակիացել են դեպքերը, երբ ՀՀ քաղաքացիներին էլեկտրոնային փոստով (e-mail) կամ տեքստային հաղորդագրությամբ (SMS) ուղարկվում են նամակներ, թե իբր տվյալ քաղաքացին շահել է որոշակի գումար կամ արժեքավոր իր, և շահումը ստանալու համար, որպես նախապայման, անհրաժեշտ է ինչ-որ բանկային հաշվեհամարի կամ կոնկրետ ֆիզիկական անձի փոխանցել որոշակի գումար՝ շահումը ստանալու իրավունքը չկորցնելու նպատակով:

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը զգուշացնում է, որ վերոհիշյալ գործունեությունը, դեպքերի բացարձակ մեծամասնությունում, իրենից ներկայացնում է խարդախություն և ֆինանսական աշխարհում հայտնի է «նիգերիական սխեմա» անունով: Նմանատիպ խարդախություններն իրականացվում են մի շարք երկրներում, ինչի «գոտ» են դառնում բազմաթիվ քաղաքացիներ:

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը քաղաքացիներին հորդորում է՝ ձեռնպահ մնալ այդպիսի հաղորդագրություններից որեւէ կերպ արձագանքելուց, և նկարագրված սխեմաների մասին որեւէ էական տեղեկատվություն ունենալու դեպքում, մասնավորապես՝



դրանց մեջ ՀՀ որեւէ քաղաքացու կամ իրավաբանական անձի ներգրավվածության վերաբերյալ, տեղեկացնել ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոն՝ 56-16-01 հեռախոսահամարով:

 Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ	
Հայտարարում է 2008-2009 ուս. տարվա ընդունելություն հետևյալ մասնագիտություններով՝ Բարձրագույն կրթական ծրագրերով՝	
<ul style="list-style-type: none"> • Ճգնաժամային կառավարում (մասնագիտացումը՝ տնտեսագետ) • Հրդեհային պաշտպանություն (մասնագիտացումը՝ ճարտարագետ) • Քաղաքացիական պաշտպանություն (մասնագիտացումը՝ ճարտարագետ) • Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում (մասնագիտացումը՝ մանկավարժ) • Փրկարարական գործ (մասնագիտացումը՝ ճարտարագետ) • Տրանսպորտային և իրաքի փրկարարական հատուկ տեխնիկայի ու սարքավորումների շահագործում և տեխնիկական սպասարկում (մասնագիտացումը՝ ճարտարագետ) 	
Ուսուցման ձևերը՝ <ul style="list-style-type: none"> • ցերեկային /առկա/ 4 տարի • հեռակա 5 տարի 	Ընդունելության բնութայնությունները՝ <ul style="list-style-type: none"> • Մաթեմատիկա (բանավոր) • Հայոց լեզու (թելադրություն) • Հայաստանի աշխարհագրություն (հարցազրույց)
Մագիստրատուրա	
<ul style="list-style-type: none"> • Ճգնաժամային կառավարում (հեռակա) • Փրկարարական գործ (առկա) 	
Միջին մասնագիտական կրթական ծրագրերով՝	
<ul style="list-style-type: none"> • Հրդեհային պաշտպանություն (մասնագիտացումը՝ իրաքի տեխնիկ) • Հրեք-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (մասնագիտացումը՝ տեխնիկ) • Սենեզմենթ /կառավարում արտակարգ իրավիճակներում/ (մասնագիտացումը՝ մենեջեր) 	
Կրթության հիմքը՝ Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 2 տարի) Հիմնական ընդհանուր կրթություն (ուսման տևողությունը 3 տարի) Ընդունելությունը՝ հարցազրույցով (ուսուցումը քաղաք Ստեփանավանում):	
Միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցումն ավարտածները կարող են ընդունվել բակալավրիատի 2-րդ կուրս:	
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ ժամը՝ 10 ⁰⁰ - 17 ⁰⁰ : Տեղեկությունների համար զանգահարել՝ 61-47-60, 61-47-01, հասցե՝ Աճառյան 1:	

